

ՏԵՂԵԿԱԳԻՐ**ՏԱՐԵԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ԺԱՌԱՆԱԳԱՒՈՐԱՅ ՎԱՐԺԱՐԱՆԻ ԵՒ ԸՆԾԱՅԱՐԱՆԻ
(2023 - 2024)****11 Յունիս, 2024, Ամավերջի Հանդես**

Գերաշնորհ Տ. Սեւան Արք. Ղարիպեան Լուսարարապետ Ս. Աթոռոյս,
Գերաշնորհ Հայրեր, Հոգեշնորհ եւ Արժանապատիւ եղբայրներ,
Բարեշնորհ Սարկաւագներ, սիրելի Ժառանգաւոր սաներ,
Յարգելի դասախօսներ եւ ներկաներ

Ահաւասիկ ուսումնական տարեշրջան մը կը բոլորէ այն օրէն, երբ Պատրիարք Սրբազան Հօր կարգադրութեամբ եւ Տնօրէն Ժողովի անդամոց հաւանութեամբ ստանձնեցի Ժառանգաւորաց վարժարանի եւ Ընծայարանի տեսչի ծանր ու պատասխանատու պաշտօնը: Թէեւ մեր վանքին մէջ իւրաքանչիւր պաշտօն ունի իր պատասխանատուութեան աստիճանը եւ ծանրութեան չափը եւ իւրովի կ'ապահովէ Սուրբ Աթոռոյս կենսագործութիւնը, սակայն մեծ բացայայտում մը ըրած չեմ ըլլար, եթէ ըսեմ որ Ժառանգաւորաց վարժարանի եւ Ընծայարանի տեսչի պարտականութիւնները պատասխանատուութեան եւ բեռի ծանրութեան կողմանէ ամենէն ծանր կշռողներէն է, քանի որ այն կը պահանջէ 24-ժամեայ զբաղուածութիւն, ուշադրութիւն, զգօնութիւն, լարուածութիւն, մտազբաղութիւն, հոգատարութիւն, հանդուրժողութիւն եւ համբերութիւն:

Ժառանգաւորաց վարժարանը եւ Ընծայարանը իր հիմնադրութենէն ի վեր արդէն 180 տարի կը հանդիսանայ շարժիչ ուժը մեր վանքին եւ կ'ապահովէ անոր ներկան ու ապագան: Այս իմաստով որուն ուսերուն, որ դրուի այս ծանր բեռը եւ պատասխանատուութիւնը, եթէ, անշուշտ, ան գիտակցի իր պաշտօնին ծանրութիւնը, կը զգայ, թէ լոկ մարդկային ուժերով եւ կարողութեամբ հնարաւոր չէ տանիլ այն, քանի որ պարզապէս գրասնեակային գործերով չէ որ ան պիտի զբաղի, այլ հայ պատանիներու մտքի, սրտի եւ հոգիի մշակութեամբ, որպէսզի տարիներ յետոյ, որպէս իր ջանքերու արդիւնաւորում՝ իւր Մայր Եկեղեցիին կարողանայ առաջադրել բանիմաց, առաքինասէր, իմաստասէր, աստուածասէր, աղօթասէր, ինքնազոհ եւ բարոյապէս անբիծ ու անբասիր ընծայացուններ, որոնք արժանապէս ծառայութեան պիտի կոչուին Եկեղեցւոյ անդամականներն են եւ հաւատարմօրէն տէր պիտի կանգնին իրենց ազգային ինքնութեան եւ այն սրբազան Ժառանգութեան, որու համար վաղ տարիքէն սկսեալ կրած են «Ժառանգաւոր» անունը:

Մեր Տէրը կ'ըսէ. «Առանց ինծի ոչինչ կրնաք ընել» (Յովհ. 15:15): Այս խօսքը ի մտի եւ ի սրտի ունենալով՝ ամենեւին չեմ վստահած իմ տկար անձիս կարողութիւններուն, այլ առաւելապէս ապաւինած եմ մեր Տիրոջ զօրութեանն ու առաջնորդութեանը, որ կը գործէ յատկապէս իրենց տկարութիւնները խոստովանող անձերու միջոցաւ, որպէսզի իր շնորհական զօրութեամբ ներգործէ եւ փոխէ մեր ուսանողներու միտքերը եւ սրտե-

րը եւ անոնցմէ պատրաստէ իր տան համար պիտանի եւ պատուական անօթներ, որոնք իրենց սրտերու մէջ կը կրեն ոչ թէ վատթար եւ յոռի ցանկութիւններ, այլ ըլլալով Սուրբ Հոգիի շնորհներով լեցուած անօթներ՝ իրենց սրտի աւելցուելով կ'ոռոգեն ու կը յագեցնեն մեր հաւատացեալ ժողովուրդի պապակ հոգիները:

Այսօր, Ամավերջեան հանդէսի այս պահուն, Ընծայարանէն ունինք երկու շրջանաւարտներ, որոնք աւարտելով Ժառանգաւորաց վարժարանի եւ Ընծայարանի ողջ ուսումնառութեան ընթացքը՝ ուրախութեամբ եւ ներքին գոհունակութեամբ կանգնած են այս բեմին վրայ եւ անհամբերութեամբ կը սպասեն իրենց վկայականները ստանալուն: Ուրախութիւն եւ ներքին գոհունակութիւն կ'ապրինք նաեւ մենք, քանի որ Ընծայարանը կու տայ այս տարուայ պտուղը, ինչը, ցաւօք, չենք կրնար ըսել Ժառանգաւորաց վարժարանի մասին, քանի որ Քորոնա ժահրի երկու տարիներու ընթացքին, ճամբաներու գոց ըլլալու պատճառաւ, հայրենիքէն եւ կամ սփիւռքի հայկական համայնքներէն նոր աշակերտներ չունեցանք: Սակայն այսօր մեր ուշադրութիւնը սեւեռած ենք մեր զոյգ շրջանաւարտներուն, որոնք արդարացի ուրախութիւն կը պատճառեն հաւասարապէս թէ՛ մեզի, թէ՛ իրենց ուսուցիչներուն եւ թէ՛ հոգեւոր դասուն, քանի որ երկուքն ալ պարկեշտ, մտքով եւ հոգիով զարգացած երիտասարդներ են: Անոնք իրենց մանկութեան եւ պատանեկութեան տարիները նուիրեցին Աստուծոյ, փողոցի խաղերու փոխարէն ընտրեցին հոգեւոր վարժարանը, իսկ անիմաստ զուարճութիւններու փոխարէն՝ աղօթքն ու ժամասացութիւնը:

Սիրելի՛ շրջանաւարտներ, ճիշդ է, մինչեւ այժմ այս ամէնի մէջ ապրեցաք եւ սորվեցաք, սակայն ձեզի կը մնայ ատոնց գործադրումն ու յարատեւացումը, քանի որ այսուհետեւ ձեր առջեւ ազատութեան հորիզոնը կը բացուի, եւ ձեր ապրելիք կեանքի ու առած որոշումներու միակ պատասխանատուն դուք պիտի ըլլաք: Պօղոս առաքեալ կ'ըսէ. «Մեծ տան մը մէջ ոչ միայն ոսկիէ եւ արծաթէ անօթներ կան, այլ նաեւ փայտէ ու հողէ անօթներ ալ կան: Ոմանք պատիւի համար են ու ոմանք՝ անարգանքի համար» (Բ Տիմ. 2:20):

Այս օրինակով առաքեալը ցոյց կու տայ, թէ Աստուծոյ տան մէջ շատեր ծառայութիւն կը մատուցեն, բայց բոլորը չեն, որ պատուական անօթներ են Անոր համար: Հետեւաբար, ջանացէք ուղիղ մտօք, սուրբ սրտիւ, անբիծ վարուք եւ անկեղծ հաւատով ու սիրով ծառայել Աստուծոյ՝ ձեր անձերը դարձնելով ընտիր եւ պատուական անօթներ, այլ ոչ թէ անօթներ միանգամեայ գործածութեան: Մշտապէս յիշէ՛ք մեր Տիրոջ այն խօսքը, որ կ'ըսէ. «Ճշմարիտ, ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, թէ ամէն ով որ մեղք կը գործէ, անիկայ մեղքի ծառայ է: Եւ ծառան յաւիտեան Աստուծոյ տան մէջ չի մնար, բայց որդին յաւիտեան կը մնայ» (Յովհ. 8:34-35):

Այս տարիներուն դուք կոչուած էիք ամբարելու ոչ թէ սոսկ տեսական գիտելիքներ, այլեւ զուգահեռաբար ձեւաւորելու հոգեւոր գիտակցութիւն՝ զանազանելու բարին չարէն, ճշմարտութիւնը՝ սուտէն, օգտակարը՝ հաճելիէն եւ Աստուծոյ կամքը՝ մեղքի հրապոյրներէն, քանի որ այսպիսի ճանաչողութեամբ եւ անոր համապատասխան կեանքով է, որ կրնաք շահիլ ձեր հոգիները եւ որդիաբար ապրիլ Աստուծոյ տան մէջ ոչ թէ ժամանակաւորապէս, այլ յաւիտենապէս:

Սիրելի՛ շրջանաւարտներ, իբրեւ Ընծայարանի ուսանողներ անգամ մը եւս աւետարանական այս պատգամները կը փոխանցեմ ձեզ եւ «Բարի երթ» կը մաղթեմ՝ յանձնելով ձեր յետագայ ընթացքը Աստուծոյ խնամքին եւ պահպանութեան:

2023-2024 ուսումնական տարին բացուեցաւ Սեպտեմբեր 6-ին: Դասերը սկսանք 25 աշակերտներով, երկու հոգեւորական եւ ինը աշխարհական ուսուցիչներով: Առաջին կիսամեան անցաւ չափազանց լարուած եւ անհանգիստ մթնոլորտի մը մէջ՝ պայմանաւորուած «Կովերու պարտէզ» կալուածին շուրջ ձեւաւորուած միջադէպերով: Շատ յաճախ աշակերտները ստիպուած էին ձգել իրենց դասարանները եւ անմիջապէս փութալ միջադէպի վայր՝ դէմ կենալու եւ կանխելու այն ապօրէն գործողութիւնները, որոնք միտուած էին բռնազաւթելու հայոց դարաւոր ժառանգութիւնը: Առիթն օգտագործելով՝ կ'ուզեմ իմ գնահատանքը բերել մեր ժառանգաւոր սաներուն իրենց նուիրումի եւ պատրաստակամութեան համար, ինչպէս նաեւ շնորհակալութիւն կը յայտնեմ մեր վանքի բոլոր այն երիտասարդներուն, որոնք շուտով միացան այս պայքարին եւ մեծ նախանձախնդրութեամբ ու յամառութեամբ ցայսօր կը շարունակեն պայքարը՝ մինչեւ հարցին բարօք հանգուցալուծումը: Թող Աստուած անսպառ դարձնէ ձեր եռանդը եւ սիրոյ ու համերաշխութեան մէջ պահէ Սաղիմահայ համայնքը՝ միասնական ջանքերով ցանկալի արդիւնքին հասնելու համար:

Այս լարուածութենէն քիչ մը շունչ կրցանք առնել երկրորդ կիսամեայի ընթացքին: Վարժարանիս ուսուցչական կազմը համալրուեցաւ երեք նոր ուսուցիչներով՝ Անգլիայէն ժամանեց Տիկին Անահիտ Աւագեան, որպէս անգլերէնի ուսուցչուհի, իսկ Մայր Հայրենիքէն՝ Տիկին Ալվարդ Խաչատրեան եւ Տիար Արմէն Ամիրխանեան: Տիկին Ալվարդ որպէս գրաբարի եւ բանասիրական նիւթերու ուսուցչուհի, իսկ Տիար Ամիրխանեան որպէս եկեղեցական երաժշտութեան ուսուցիչ, ժառանգաւորաց երգչախումբի խմբավար եւ դպրապետ:

Այս առթիւ շնորհակալութիւն կը յայտնեմ մեր սիրելի ուսուցիչներուն, որ սիրով ընդունեցին Երուսաղէմ գալու եւ դասաւանդելու առաջարկս, որն իրականութեան մէջ սոսկ աշխատանքի առաջարկ մը չէր, այլ Տէրունակոխ սրբատեղիներուն ֆիզիքապէս մօտ ըլլալու եւ անոնց շնորհներուն հաղորդ դառնալու ընձեռուած հնարաւորութիւն:

Գոհունակութեամբ պէտք է նշեմ, որ նոր ուսուցիչներու հետ մէկտեղ այս տարի Հայաստանէն ունեցանք ինը նոր աշակերտներ, որոնցմէ երկուքը ժամանեցին 2024 թրւականի տարւոյն սկիզբը, իսկ եօթը՝ Մարտին: Անկասկած ամէն տարի նոր աշակերտներու ընդունելութիւնը եւ համալրումը նոր շունչ եւ աւիշ կը հաղորդէ այս հաստատութեան՝ երաշխաւորելով անոր շարունակականութիւնն ու կենսագործունէութիւնը: Թող Աստուծոյ ձեռքը միշտ մեր վարժարանի եւ սաներու վրայ ըլլայ:

Ընդունուած սովորութեան համաձայն, տարուայ ընթացքին, Սուրբ Ծննդեան եւ Զատիկական տօներու ծանրաբեռնութենէ թօթափուելու եւ հանգստանալու համար ունեցանք երկու պտոյտներ՝ Մեռեալ ծով եւ Սուխնէ, իսկ Մեծի Պահոց առաջին օրը, Թէոդորոս Սրբազանի ընկերակցութեամբ, կատարեցինք յիշարժան ուխտագնացութիւն մը դէպի Այնքերիմի սրբատեղիներ՝ աղօթքով զօրանալու եւ եկեղեցւոյ մեծագոյն սուրբերէն՝ Յովհաննէս Մկրտչի բարեխօսութեանը արժանանալու համար: Վարժարանիս տեսչութիւնը յիշարժան ուխտագնացութիւն մըն ալ կազմակերպեց Սաղիմահայ համայնքին համար դէպի Գալիլիոյ սրբավայրեր, որ մեծ ոգեւորութիւն եւ խանդավառութիւն առաջացուց ուխտագնացներուն մէջ:

Տարւոյս Մարտ 29-ին, 11 ժառանգաւոր սաներ ստացան դպրութեան չորս աստիճաններ՝ ձեռամբ Սուրբ Աթոռոյս Լուսարարապետ Գերաշնորհ Տ. Սեւան Արքեպիսկոպոս Ղարիպեանի: Կը մաղթենք, որ անոնք Տէրունական պատուէրին համաձայն քիչին մէջ

հաւատարիմ ըլլալով՝ աւելի բարձր եկեղեցական աստիճաններու արժանանան:

Գալով վարժարանիս կրթական ծրագրին, պէտք է ըսել, որ այս տարի եւս այն ընթացաւ ըստ նախընթացի, աւանդուեցան Հին եւ Նոր Կտակարանի ներածութիւն եւ մեկնութիւն, Քրիստոնէական, Ծիսական եւ Վարդապետական Աստուածաբանութիւն, Հայոց լեզու եւ Գրականութիւն, Գրաբար, Հայոց Պատմութիւն, Հայ եւ Ընդհանրական եկեղեցւոյ պատմութիւն, Փիլիսոփայութիւն, Հոգեբանութիւն, Բարոյագիտութիւն, Տրամաբանութիւն, Անգլերէն, Եբրայերէն եւ Արաբերէն լեզուներ, Հաւանականութիւն, Վիճակագրութիւն, Երգեցողութիւն, Եկեղեցական եւ Եւրոպական երաժշտութիւն առարկաներ: Ուրախութեամբ պէտք է նշեմ, որ այս տարուայ դասացուցակը հարստացաւ քանի մը կարեւոր առարկաններով. «Եկեղեցական իրաւունք», որ մեր խնդրանքով դասաւանդումը յանձն առաւ Տիար Արամ Դիլանեան, «Հետազոտութեան պլանաւորում», որ կը դասաւանդէ Տիկին Ալվարդ Խաչատրեան, որու համար մեծապէս շնորհակալ ենք անոնց: «Հետազոտութեան պլանաւորում» առարկայի շնորհիւ Ընծայարան Գ-ի զոյգ շրջանաւարտները փոքրիկ հետազոտական աշխատանքներ կատարեցին, որը ներկայացուցին նաեւ բանաւոր կերպով: Այս աշխատանքն իբրեւ փորձառութիւն եւ հմտութիւն, յետագային պիտի օգնէ անոնց աւելի բարձր ուսումնական հաստատութիւններու մէջ ուսանելու ընթացքին: Զափազանց մեծ հետաքրքրութիւն մտցուցին մեր աշակերտներու առօրեայի մէջ նաեւ Ճատրակի դասերը, որոնց նկատմամբ հետաքրքրութիւնը աշակերտներու մէջ երթալով աւելցաւ եւ յատկապէս արտայայտուեցաւ ճատրակի մրցաշարերու ընթացքին: Այս ծրագրի նախաձեռնութեան եւ իրագործման համար մեծապէս շնորհակալ ենք Տիար Վարդան Կարապետեանին: Տարույս Ապրիլ ամսոյն պարոն Կարապետեան հանդէս եկաւ եւս մէկ կարեւոր նախաձեռնութեամբ. վարժարանի փոքր սրահին մէջ տարբեր դասարաններու աշակերտները ներկայացուցին իրենց ուսումնասիրած նիւթերը, որը եւս կարեւոր փորձառութիւն եղաւ մեր սաներու համար:

Այժմ կը ցանկանք մեր շնորհակալութիւնները յայտնել այն անձերուն, որոնք ժառանգաւորաց վարժարանի եւ Ընծայարանի համար ունին իրենց ներդրումները:

Երախտապարտ ենք Ամենապատիւ Պատրիարք Սրբազան Հօրը վարժարանի հովանաւորութեան համար: Կ'աղօթենք, որ Աստուած անոր շնորհէ առողջութիւն, ուժ եւ կարողութիւն՝ շարունակելու մեր Պատրիարքութեան ղեկավարութիւնը Սրբոց Յակոբեանց Միաբանութեան աջակցութեամբ:

Երախտապարտ ենք Սուրբ Աթոռոյս Լուսարարապետ՝ Գերաշնորհ Տ. Սեւան Արքեպիսկոպոս Ղարիպեանին իր հոգատար եւ հայրական վերաբերմունքին համար՝ ուղղւած մեր վարժարանին եւ ժառանգաւորներուն:

Առանձնապատուկ շնորհակալութիւն կ'ուզենք յայտնել Թէոդորոս Սրբազանին, որ իր բազմազբաղ ժամանակը կը տրամադրէ եւ կը շարունակէ դասաւանդել մեր Ժառանգաւոր սաներուն, նաեւ իր երկարամեայ տեսչութեան հարուստ փորձով եւ խորհուրդներով մշտապէս կ'աջակցէ մեզի՝ վարժարանի տեսչական գործին ընտելանալու եւ ասոր հետ կապուած դժուարին խնդիրներուն լուծում գտնելու մէջ: Շնորհակալութիւն Զեզ, սիրելի՛ Սրբազան Հայր, Զեր բարի կամեցողութեան եւ աջակցութեան համար, ինչպէս նաեւ վարժարանի նկատմամբ Զեր հայրական խնամքը չպակասեցնելու համար:

Երախտապարտ ենք նաեւ Հայր Եղիշէին, որ մեր խնդրանքին ի պատասխան սիրայօժար կերպով յանձն առաւ Վարք Սրբոց առարկան դասաւանդել Հայաստանէն ժա-

մանած նոր աշակերտներուն: Ձեր վարձքը կատար սիրելի՛ Հայր Սուրբ:

Մեր շնորհակալութիւնը վարժարանիս փոխ-տեսուչ՝ Բարեշնորհ Աշոտ Սրկ. Ղազարեանին իր հետեւողական եւ բարեխիղճ ծառայութեան համար, ինչպէս նաեւ վարժարանիս Նախապատրաստական եւ Ա. դասարաններուն կրօնական նիւթեր դասաւանդելու համար:

Մեր սրտագին շնորհակալութիւնները կը յղենք նաեւ բոլոր այն ուսուցիչներուն, որոնց անուանապէս չիշեցինք: Երախտապարտ ենք ձեր ջանքերու եւ նուիրումի համար, որ կը ներդնէք մեր աշակերտներու կրթութեան գործը յաջողցնելու մէջ: Վարձքերնիդ կատար սիրելի՛ ուսուցիչներ եւ դասախօսներ, կը մաղթենք ձեզի տոկուն կամք եւ համբերութիւն՝ շարունակելու սերունդներու կրթութեան ձեր նուիրական գործը:

Շնորհակալ ենք վարժարանիս տնտեսական պատասխանատու Պրն. Լեւոն Պոյաճեանին իր ուշադիր եւ բարեխիղճ աշխատանքին համար, սիրելի մայրիկներ՝ Տիկ. Մարի Պալըզճեանին եւ Տիկ. Էլիզապէթ Գրիգորեանին, բուժքոյր Սեդա Կէճէքլեանին անոնց մեծ սրտի եւ մեր աշակերտներու հանդէպ ցուցաբերած մայրական հոգատարութեան համար:

Մասնաւոր շնորհակալական խօսք ունինք Տօքտ. Տինա Պլոքլանտին, որ 17 տարի Ընծայարանի մէջ կրօնական առարկաներ դասաւանդելէ յետոյ այս տարի պիտի դադարի ուսուցչութեան իր պաշտօնէն:

I would also like to take a moment to recognize Dr. Dina Blokland, who will be leaving the seminary after an outstanding 17 years of teaching Biblical and religious subjects. Over these last two decades, Dr. Blokland's dedication, profound knowledge, and nurturing care have profoundly influenced generations of seminarians, including myself. Her contributions have not only educated but also nurtured the spiritual growth of our students. As she embarks on the next chapter of her journey, we extend our heartfelt gratitude for all the wonderful years she has given us and we wish her the best for her future endeavors.

We also want to thank Mrs. Jasmine Salameh Suri, our beloved Arabic language teacher, who will be leaving the seminary as well this year. I am delighted to hear that she will be moving to Armenia this summer to start a new life there. Despite your short time with us, you as well have become family to us and you leave us with cherished memories. Thank you.

Մեր խորին շնորհակալութիւնները կ'ուղենք յայտնել նաեւ Երուսաղէմի Բարեսիրաց Միութեան վարչութեան, Տիար Յակոբ Տէմիրճեանին, Տիկին Սեդա Կէճէքլեանին, որ գեղեցիկ աւանդութեան համաձայն ամէն տարի մեր շրջանաւարտներուն նուէրներ կ'ընծայեն:

Շնորհակալ ենք նաեւ ձեզ՝ յարգելի՛ հիւրեր, որ ձեր ցանկալի ներկայութեամբ պատուեցիք մեր շրջանաւարտները:

ԳԷՈՐԳ ՎԱՐԴԱՊԵՏ ՀԱՅՐԱՊԵՏԵԱՆ

Տեսուչ Ժառանգաւորաց Վարժարանի եւ Ընծայարանի